

պանեց ընդդէմ Աղթամարի Մարտիրոս Մոկացի կաթողիկոսին, մասնաւոր հոգածութեան առարկայ դարձուց Նոր-Ջուղայի եւ Սանահինի վանքերը, եւ աշխատեցաւ վերջ դնելու Գանձասարի Աթոռին համար մղուող հակամարտութեանց :

Եօթը տարի անդուլ աշխատեցաւ ջնջելու նպատակաւ Եզրագար Անքապցիի հակաթոռ կաթողիկոսութիւնը, սիրալիր եւ հաշտարար հոգի մը յայտնաբերելով հանդէպ իր հակառակորդին, որ սակայն մնաց իր ըմբոստութեան մէջ անընկնելի: Այս տրտնալի շրջանին, Յակոբ կաթողիկոսին կատարած բազմաթիւ դիմումները Բ. Դրան մօտ առիթ տուին մեծագումար պարտքերու բարդումին, պարտքեր՝ գորս խղճամիտ Հայրապետը հետամուտ եղաւ վնասելու մինչեւ իր կեանքին վերջը, առանց դպչելու էջմիածնի Գանձին, եւ պարտատէրերու հանդէպ գրտնուելով համբերատար, հեզաբարոյ, արդարամիտ:

Լեհաստանի գործերու միջամտութեան մէջ, ինչպէս նաեւ Հոռմի Ս. Աթոռին հետ իր յարաբերութեանց ընթացքին, բազմիցս ցոյց տուաւ կատարեալ հաւատակցութիւն եւ հպատակութիւն հանդէպ Սրբազան Քահանայապետին, զայն պատուելով — յարգանքի եւ սիրոյ խոր զգացումներով — իր բնւր Բրիտանի Փոխանորդը եւ Տեսանելի Պետր համայն քրիստոնեաներուն: Իր կաթողիկէ դաւանանքին արգելիչ չեղաւ սակայն պա-